«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 94-16-13-93

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
(2018-2019 թթ. ուստարվա 1-ին կիսամյակ)

ք. Իջևան «20» դեկտեմբերի 2018թ.

Հ/Հ	Միջոցառման բնույթը	Խորագիրը/ Թեման	Անցկացման օրը	Համառոտ նկարագրությունը
1.	Հանդիպում	Առաջինկուրսեցիների հետ	03.09.2018	Ներկա էին Տնտեսագիտության և Կիրառական արվեստի ֆակուլտետների առաջին կուրսի ուսանողները: Հանդիպման ընթացքում համառոտ ներկայացվեցին ՈՒԳԸ նպատակներն ու խնդիրները, ծավալած գործունեությունը, անդամակցության կարգը:
2.	Կինոդիտում-քննարկում	<<Անբացատրելին: Քարանձավներ>>	19.09.2018	Ներկա էին Բնական գիտությունների ֆակուլտետի ուսանողներ և 3 դասախոս (ընդհանուր 10 հոգի): Ֆիլմից հետո զեկուցումով հանդես եկավ <<Քարտեզագրություն և կադաստրային գործ>> մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Ջավահիր Մնացականյանը:
3.	Առցանց հարցում	«Գենդերային անհավասարություն» խորագրով	26.09.2018	Հարցման արդյունքները ամփոփ ներկայացվեցին «Հոգատարություն հանուն հավասարության» ծրագրի շրջանակներում: Հարցմանը մասնակցել են 40 անձինք (ուսանողներ և այլ երիտասարդներ) Տավուշից, որից շուրջ 80%-ը Իջևանից և հարակից բնակավայրերից էին: **Համագործակցություն՝ «Վորլդ Վիժն Հայաստան» համաշխարհային կազմակերպություն**
4.	Կինոդիտում	«Թումանյան. և՛ սիրտ, և՛ կամք, և՛ միտք»	01.10.2018	Ներկա էին «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն» մասնագիտությունների ուսանողներ: Կինոդիտումը կազմակերպվել էր Ամենայն հայոց բանաստեղծի 150-ամյակին ընդառաջ: Ֆիլմի շնորհիվ մեր ուսանողներին հնարավորություն ընձեռվեց ճանաչելու հանճարեղ լոռեցուն՝ որպես մարդու, ով ուներ իր անձնականը, անանձնական սերն ու ցավը:
5.	Սեմինար	«Կիբեռանվտանգությու	03.10.2018	Սեմինարը վարում էր «Քարտեզագրություն

		ն: Ինչպե՞ս չդառնալ համացանցի զոհը»		և կադաստրային գործ» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Ջավահիր Մնացականյանը: Ներկա էին ուսանողներ Բնական գիտությունների և այլ ֆակուլտետներից: Սեմինարի ընթացքում քննարկվեցին հարցեր կիբերանվտանգության անհրաժեշտության, կիբերտարածությունում անվտանգության խնդիրների և շրջապատող դաշտի կիբեր-անվտանգության իրականացման ու պահպանման մասին: Խոսվեց վնասակար ծրագրերի, վիրուսների, հաքերների, ինչպես նաև դրանց՝ համակարգիչ մուտ գործելու դեպքում հնարավոր խնդիրների մասին:
6.	Ինտելեկ-տուալ խաղ	«Դասախոս-ուսանող»	16.10.2018	Ընկերական խաղն ընթացավ երկու թիմերի միջև: Դասախոսների թիմում ընդգրկված էին մասնաճյուղի 6 դասախոսներ, իսկ ուսանողների թիմում խաղում էին տարբեր ֆակուլտետների և մասնագիտությունների 7 ուսանողներ: Թեժ պայքարից հետո հաղթող ճանաչվեց դասախոսների թիմը՝ պարգևատրվելով պատվոգրով և հուշանվերներով, իսկ ուսանողների թիմն ստացավ հավաստագիր: **Համագործակցություն՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԽ**
7.	Սեմինար	«Վիքիպեդիա: Վիքիխմբագրում»	18.10.2018	ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախաձեռնությամբ և «Վիքիմեդիա Հայաստան» հասարակական կազմակերպության աջակցությամբ կայացավ Կողբի վիքիակումբի կամավորների այցը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ: Վիքիակումբի համակարգող Հասմիկ Ղարագյոզյանը ներկայացրեց՝ ինչ է Վիքիպեդիան, որոնք են «Վիքիմեդիա Հայաստան» ՀԿ-ի նպատակները: Այնուհետև կամավորները ներկաներին ծանոթացրին տարբեր նախագծերի հետ՝ Վիքիպեդիա, Վիքիդարան, Վիքիբառարան: **Համագործակցություն՝ «Վիքիմեդիա Հայաստան» ՀԿ**
8.	Ներբուհա-կան գիտաժողով	«Հինավուրց և երիտասարդ մայրաքաղաք»	27.10.2018	Ներբուհական գիտաժողովին մասնակցում էին Տնտեսագիտության և Հումանիտար գիտությունների ֆակուլտետների 12 ուսանողներ, ովքեր հանդես եկան լեզվաբանությանը, տնտեսագիտությանը, պատմությանը և այլ ոլորտների վերաբերող զեկուցումներով: Նախ տեղի ունեցավ լիագումար նիստ, և բացման խոսքով հանդես եկավ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Ա. Վ. Ցուցուլյանը՝ ողջունելով բոլոր ներկաներին, այնուհետև գիտաժողովը շարունակվեց երկու՝ Պատմության և տնտեսագիտության (5 զեկուցող), Բանասիրության և հասարակագիտության

				բաժանմունքներում (7 զեկուցող)։
9.	Սեմինար	«Կենտրոնական բանկի խնդիրները տնտեսական զարգացման համատեքստում»	02.11.2018	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի նախաձեռնությամբ, ՈւԳԸ և ՈւԽ-ի հետ համագործակցությամբ տեղի ունեցավ ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչների այցը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ։ Ներկա էին ՀՀ ԿԲ-ի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանը, ՀՀ ԿԲ-ի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի ղեկավար Արմեն Նուրբեկյանը, ղեկավարի օգնական Սյուզան Մկրտչյանը, ՀՀ ԿԲ-ի դրամավարկային և ֆինանսական վիճակագրության բաժնի պետ Արթուր Ղալթախչյանը, տնտեսական հետազոտությունների վարչության տնտեսագետ Գևորգ Մինասյանը և ուրիշներ։ Սեմինար-քննարկումը վարեց ՀՀ ԿԲ-ի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանը, ով ներկայացրեց սեմինարի հիմնական խնդիրները՝ համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո պարադիգմի փոփոխությունը, գների կայունությունը, ֆինանսական կայունությունը, ֆինանսական շուկաները որպես կայունության պայման, ԿԲ-ի քաղաքականությունների արդյունքները և հետազոտական օրակարգը։ **Համագործակցություն՝ ՀՀ ԿԲ, ԵՊՀ ԻՄ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն, ԵՊՀ ԻՄ ՈւԽ**
10.	Գիտահան-րամատչելի զեկուցում	«Կյանքի ծագման մասին տեսությունները»	08.11.2018	Զեկուցումը ներկայացրեց «Պատմություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Մհեր Ղալումյանը։ Զեկուցման մեջ անդրադարձավ կյանքի ծագման հետ կապված տեսություններին, մասնավորապես աշխարհահռչակ ֆիզիկոս և մաթեմատիկոս Լոուրենս Կրաուսի առաջ քաշած «Տիեզերքը ոչնչից» տեսությանը, մարդու ծագման խնդրին և Էվոլյուցիոն տեսությանը։
11.	Գիտահան-րամատչելի զեկուցում	«Յանուշ Կորչակի կյանքն ու մանկավարժական գործունեությունը»	16.11.2018	Զեկուցմամբ հանդես եկավ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Արինա Ալավերդյանը։ Զեկուցման մեջ ներկայացված էին այն հիմնական գաղափարներն ու մոտեցումները, որոնցով պետք է առաջնորդվեն ապագա մանկավարժները։
12.	Հանդիպում	«Վարդանանք» ռազմահայրենասի-րական դաստիարակչության ակումբի ներկայացուցիչների հետ	17.11.2018	ԵՊՀ ԻՄ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Ավագյանի նախաձեռնությամբ և ԵՊՀ ԻՄ ՈւԳԸ, ՈւԽ աջակցությամբ կայացավ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակչության ակումբի ներկայացուցիչների այցը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ։

				Հանդիպմանը ներկա էին նաև Պատմության ֆակուլտետի զոհված ուսանող, հերոս Թաթուլ Կրպեյանի քույրը՝ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի փոխնախագահ Ռուզաննա Կրպեյանը, Պատմության ֆակուլտետի զոհված ասպիրանտ-ազատամարտիկ Վարդան Բախշյանի քույրը՝ Աննա Բախշյանը և Իրավագիտության ֆակուլտետի զոհված ուսանող-ազատամարտիկ Տիգրան Սարգսյանի կինը՝ Լուսինեն, ԵՊՀ-ի ուսանողներ, ինչպես նաև «ԱՍԱԼԱ»-ի «Վան» ռազմագործողության ղեկավար Վազգեն Սիսլյանը, ով ներկայացրեց գործողությունը՝ պատմելով դատի, բանտարկության տարիների և դեպքերից հետո իր կյանքի մասին: Հանդիպման ընթացքում ուսանողները հարցեր հնչեցրին հայրենասիրության, դրա դրսևորումների մասին, այնուհետև մասնաճյուղի ուսանողներն ու ակումբի ներկայացուցիչները քննարկեցին անդամակցության և համագործակցության հարցը: **Համագործակցություն՝ ԵՊՀ ԻՄ Հայուց լեզվի և գրականության ամբիոն, ԵՊՀ ԻՄ ՈՒԽ**
13.	Բիզնես-խաղ	«Միկրոպլան»	22.11.2018	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս Անուշ Սարիբեկյանի ու Տավուշի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի նախաձեռնությամբ, բուհի ուսանողական կառույցների (ՈՒԳԸ և ՈՒԽ) աջակցությամբ կայացավ «Միկրոպլան» բիզնես-խաղը, որը նվիրված էր ՀՀ ազգային արժույթի՝ դրամի ստեղծման 25-ամյակին: Բիզնես-խաղին մասնակցում էին Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտություն», «Սերվիս», «Զբոսաշրջություն» և «Ֆինանսներ» մասնագիտությունների 15 ուսանողներ: Խաղը վարում էին Տավուշի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի աշխատակիցները: **Համագործակցություն՝ԵՊՀ ԻՄ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն, Տավուշի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն, ԵՊՀ ԻՄ ՈՒԽ**
14.	Առաջնութ-յուն	«Շախմատի մասնաճյուղային առաջնություն»	28.11.2018	Առաջնության մրցավարն էր ՀՀ շախմատի ակադեմիայի Աչաջրի մասնաճյուղի մարզիչ Արտակ Եգանյանը: 18 մասնակիցներից խաղային զույգեր կազմվեցին համակարգչային ծրագրի

				միջոցով՝ հիմնված պատահական ընտրության վրա, որից հետո սկսվեց առաջնության առաջին տուրը: 7 տուրից, ծավալված թեժ մրցակցությունից հետո առաջնության հաղթող ճանաչվեց «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Արայիկ Շահնազարյանը (7 խաղից 7 հաղթանակ): **Համագործակցություն՝ ՀՀ շախմատի ակադեմիայի Աչաջրի մասնաճյուղ**
15.	Մասնակ-ցություն	Հռետորական հմտությունների զարգացման եռօրյա դասընթաց	01.12-03.12	Դեկտեմբերի 1-3-ը Տավուշի մարզի Իջևան քաղաքում տեղի ունեցավ հռետորական հմտությունների զարգացմանն ուղղված եռօրյա դասընթաց, որը նախատեսված էր տավուշի մարզի երիտասարդների համար: Դասընթացին մասնակցում էին նաև ԵՊՀ ԻՄ ՈւԳԸ 8 անդամներ: Մասնաճյուղի ՈւԳԸ-ն որպես համակործակցող կողմ ներառված է եղել դասընթացի մասին տեղեկատվության տարածմամբ, մասնակցության ապահովմամբ: **Համագործակցություն՝ «Հարմոնիա» հոգեբանության հանրային զարգացման կենտրոն**
16.	Բանավեճ-քննարկում՝ նվիրված Պատմաբանի օրվան	«Հայոց պետականության կերտումը, հիմնական փուլերն ու բնութագրական գծերը (1918-1920 թթ.)»	06.12.2018	Քննարկմանը մասնակցում էին Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոսներ Ա.Ազատյանը, Վ.Պողոսյանը, պ.գ.թ., ասիստենտ Ն.Գրիգորյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, պ.գ.թ. Լ.Բեգինյանը, «Պատմություն» մասնագիտության տարբեր կուրսերի ուսանողներ: Բուռն բանավեճ-քննարկում ծավալվեց նաև ժողովրդավարության և խորհրդարանական համակարգի արդյունավետության խնդիրների շուրջ: Համեմատություններ անցկացվեցին Առաջին և Երրորդ հանրապետությունների վարած քաղաքականությունների միջև: **Համագործակցություն՝ Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն**
17.	Առաջնութ-յուն	«Ինտելեկտուալ խաղի մասնաճյուղային առաջնություն»	08.12.2018	Խաղն անցկացվեց 1 փուլով, որի ընթացքում տրվեցին տրամաբանությունն ու ընդհանուր զարգացվածությունը ստուգող 15 հարցեր: Արդյունքում, հավաքելով 15 հնարավորից 12 միավոր, առաջնության հաղթող ճանաչվեց «Պատմություն 3» թիմը, ում տրվեց առաջնության փոխանցիկ գավաթը, հուշանվեր և պատվոգիր: Մնացյալ թիմերը պարգևատրվեցին հավաստագրերով:
18.	Սեմինար-	«Դրամավարկային և	18.12.2018	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

	քննարկում	մակրոպրուդենցիալ քաղաքականությունը ՀՀ-ում»		Տնտեսագիտության ֆակուլտետում ՈւԳԸ և ՈւԽ նախաձեռնությամբ, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի աջակցությամբ կայացավ դրամավարկային քաղաքականությանն ուղղված սեմինար-քննարկում, որը վարում էին ՀՀ Կենտրանական բանկի ներկայացուցիչները՝ Դրամավարկային քաղաքականության վարչության պետ Վահագն Գրիգորյանը, Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի տնօրեն Արմեն Նուրբենկյանը, Տնտեսական հետազոտությունների վարչության տնտեսագետ Արթուր Ղալթախչյանը: Սեմինարի ընթացքում խոսվեց դրամավարկային քաղաքականության լծակների, փոխանցումային շղթայի, նոր որդեգրած մակրոպրուդենցիալ քաղաքականության, ինչպես նաև փողի ագրեգատների նպատակադրումից գնաճի նպատակադրմանը անցում կատարելու պատճառների մասին: **Համագործակցություն՝ ՀՀ ԿԲ, ԵՊՀ ԻՄ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն, ԵՊՀ ԻՄ ՈւԽ**
19.	Ինտելեկտուալ խաղ	«Տնտեսագիտական ինտելեկտուալ խաղ 3»	20.12.2018	Արդեն 3-րդ կիսամյակն անընդմեջ կայացավ «Տնտեսագիտական ինտելեկտուալ խաղը», որին մասնակցում էին 3 թիմեր «Տնտեսագիտություն» և «Ֆինանսներ» մասնագիտության առաջինից երրորդ կուրսի ուսանողները: Թիմերը կազմված էին պատահականության սկզբունքով, որպեսզի խաղի ընթացքում ավագ կուրսի ուսանողների փորձը փոխանցվի կրտսեր կուրսի ուսանողներին: Խաղն անցկացվեց 4 փուլով, տրվեցին մասնագիտական հարցեր, տնտեսագիտական թեքումով տրամաբանական հարցեր, 2 տեսակի տնտեսագիտական խաչբառեր: Հաղթող թիմը պարգևատրվեց պատվոգրով:

Մասնաճյուղի ՈՒԳԸ նախագահ՝ Հ.Ղարագյոզյան

քարտուղար՝ Ս.Շահնազարյան